ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷԼԱԱՄՈԴԱ ՍՊԸ-ն ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/38 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Արտահագուստի հավաքածուն բաղկացած է ձմեռային բաճկոնից և տաբատից: Նախատեսված է պահակային ծառայության համար: Հիմնական գործվածք Պարզ հյուսվածքով, թաղանթային ծածկույթով, ամրացնող տեխնոլոգիայով մշակված և պոլիուրեթանային ներծծմամբ պոլիեսթերային գործվածք, որն ապահովում է անջրանցիկություն և օդաթափանցելիություն: • Կազմը՝ 100% պոլիեսթեր: • Մակերեսային խտությունը՝ 140 գ/մ²: Գործվածքը պետք է լինի մաշվածադիմացկուն, ձևը պահպանող և հեշտ խնամվող: Լվացումներից հետո պետք է պահպանի սկզբնական գույնն ու ձևը, իսկ սինթեպոնային ջերմամեկուսիչ շերտը՝ իր կառուցվածքը: Բաճկոն • Վեց վրադիր ծավալային գրպան, ծոցագրպան և ռադիոկապի սարքի համար նախատեսված տեղ: • Ջերմամեկուսիչ միջնաշերտը՝ երկշերտ սինթեպոն՝ յուրաքանչյուր շերտի մակերեսային խտությունը 150 գ/մ²: • Աստառը 190T գործվածքից: Բաճկոնի մեջքի կենտրոնական մասում կարել 5 սմ լայնությամբ 28 սմ երկարությամբ գործվածքով «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» բառը, իսկ կրծքավանդակի ձախ մասում՝ 1 վրադիր գրպան կափույրով, որի վրա պետք է գրված լինի «ԲԷՑ ՓԲԸ» բառերը: Գործվածքը լինի սև գույն դեղին եզրերով, տառերը լինեն դեղին գույն, բարձրությունը լինի 3 սմ: Բաճկոնի երկարությունը գոտկատեղից ներքև, լինի ուղիղ կենտրոնական մետաղական կայծակ-շղթայով՝ վերևից և ներքևից բացվելու հնարավորությամբ, պաշտպանված կպչուն ժապավենով կամ կոճակ-կնոպկայով ամրացող վրադիր դետալով: Բաճկոնի օձիքը պետք է նախատեսված լինի կրման երկու տարբերակով՝ ուղղահայաց և ծալվող, որի վրա պետք է մետաղական շղթայով ամրացված լինի գլխարկ (капюшон), որը ունենա ձեռքով կարգավորվող քուղ ֆիքսատորներով: Տաբատ • Երեք Գրպան: • Գոտկատեղը առաձգական

	ժապավենով: • Ջերմամեկուսիչ միջնաշերտը՝ միաշերտ սինթեպոն՝ 200 գ/մ² մակերեսային խտությամբ: • Աստառը 190T գործվածքից: Առաջամասի մուտքի բացվածքը կայծակ-շղթայով և կոճակով: Մեջքի հատվածում գոտու կարգավորիչ ռեզինե ժապավենով, 2 կողքային գրպան թեքված մուտքով, իսկ հետևի 1 վրադիր գրպանը բաց ուղիղ մուտքով: Տաբատը ունենա տաքացվող ներդիր, որը մշակված է մինիմում 200 գ/մ2 խտությամբ սինթեպոնով: Կանխավճար չի նախատեսվում. Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Մասնակիցը պետք է ներկայացնի՝ ձմեռային արտահագուստի նմուշների օրինակ և նմուշները պետք է պարտադիր համաձայնեցվեն Պատվիրատուի հետ: Կտորը, որից կարվելու է արտահագուստը պետք է ունենա որակի համապատասխանության սերտիֆիկատ, և համապատասխանի СТО 71327041-004-2008, EN ISO 14116, ГОСТ Р 12.4.236-2007 ստանդարտներին: Ձմեռային արտահագուստի չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Արտաքին տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պահակային ծառայության ձմեռային արտահագուստի գույնի երանգը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЭЛААМОДА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/38 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	-